ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2015 թվականի N 1532 - Ն

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ DVB-T2 ՍՏԱՆԴԱՐՏԻ ԹՎԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԻՉ ՍԱՐՔԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1208-Ն որոշման 5-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սոցիալապես անապահով ընտանիքներին որպես սոցիալական աջակցություն հատկացված DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի (այսուհետ՝ օգնություն) բաշխման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Սոցիալապես անապահով ընտանիքներին որպես սոցիալական աջակցություն հատկացված DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի բաշխման անձնագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարին տրամադրել 2015 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և 34.6 և ավելի անապահովության միավոր ունեցող ընտանիքների վերաբերյալ ամփոփ տվյալները՝ ըստ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների).

2) Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների) աշխատակազմերի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին (բաժիններին) տրամադրել 2015 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և 34.6 և ավելի անապահովության միավոր ունեցող ընտանիքների ցուցակը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության հետ համատեղ կազմակերպել օգնության փոխադրման աշխատանքների իրականացումը մինչև մարզկենտրոններ.

2) վերահսկել, համակարգել և Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի (համաձայնությամբ) հետ համատեղ կազմակերպել բեռնա-թափման, ինչպես նաև բաշխման աշխատանքների իրականացումը.

3) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարա-րությանը տրամադրել 239 հատ DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքեր՝ նախարարության համակարգի խնամք տրամադրող կազմակերպությունների շահառուներին բաշխելու նպատակով:

4. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել 2000 հատ DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքեր:

5. Հայաստանի Հանրապետության մարզպետներին (առաջարկել Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետերին)՝ ապահովել սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) կողմից օգնության բաշխումը՝ համաձայն սույն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. դեկտեմբերի 24
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 24-ի N 1532 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ DVB-T2 ՍՏԱՆԴԱՐՏԻ ԹՎԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԻՉ ՍԱՐՔԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սոցիալապես անապահով ընտանիքներին որպես սոցիալական աջակցություն հատկացված DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի (այսուհետ՝ օգնություն) բաշխման հետ կապված հարաբերությունները:

2. Օգնության բաշխումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների (համաձայնությամբ) աշխատակազմերի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները կամ բաժինները (այսուհետ՝ տարածքային մարմին):

3. 2015 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և 34.6 և ավելի անապահովության միավոր ունեցող ընտանիքների օգնության բաշխման ցուցակները (այսուհետ՝ ցուցակ) մեկ օրինակից տարածքային մարմիններին տրամադրում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

4. Ցուցակները ձևավորվում են ըստ տարածքային մարմինների և ըստ հասցեների:

5. Օգնության բաշխման անձնագիրը փակցվում է յուրաքանչյուր բաշխման կետի տեսանելի վայրում:

6. Օգնության բաշխման կետերն ընտրվում, իսկ օգնությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի, Գյումրու, Վանաձորի,

Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների (համաձայնությամբ) աշխատակազմերի և տարածքային մարմինների կողմից:

7. Օգնությունը հատկացվում է անվճար:

8. Օգտագործելով տեղեկատվական բոլոր հնարավոր միջոցները, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության մարզպետարանները (Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների (համաձայնությամբ) և տարածքային մարմինները կատարում են օգնության բաշխման տվյալ ծրագրի իրականացման ժամկետների և պայմանների իրազեկում:

9. Օգնությունը կարող է ստանալ ցուցակի մեջ ընդգրկված անձը (այսուհետ՝ շահառու) կամ նրա ընտանիքի սոցիալական անձնագրում հաշվառված չափահաս անդամներից մեկը:

10. Շահառուի կողմից օգնության ստացման անհաղթահարելի դժվարության (հիվանդության, ծերության, հաշմանդամության, անշարժունակության) դեպքում, տվյալ տարածքն սպասարկող տարածքային մարմնի իմացությամբ, օգնություն կարող է ստանալ շահառուի հետ ազգակցական կապ ունեցող այն քաղաքացին, ով տարածքային մարմին կներկայացնի իր և շահառուի անձնագրերը, շահառուի ընտանիքի սոցիալական անձնագիրը, ինչպես նաև նրա կողմից գրված օգնության ստացման մասին լիազորագիրը (առանց նոտարական վավերացման):

11. Շահառուն բաշխման կետում տարածքային մարմնի համապատասխան աշխատողին ներկայացնում է ընտանիքի սոցիալական անձնագիրը և իր անձնագիրը:

12. Օգնության բաշխման ժամանակահատվածում իր մշտական բնակության վայրից բացակայող ընտանիքը չի կարող ստանալ օգնությունը:

13. Օգնության հատկացման ժամանակ տվյալ ընտանիքի սոցիալական անձնագրի 35-րդ դաշտում գրանցվում է օգնության անձնագրի համարը և ընտանիքի անապահովության միավորը (ցուցակի «միավոր» սյունակի «նոր» ենթասյունակ), 36-րդ դաշտում «օր», «ամիս»,

«տարի», 37-րդ դաշտում «ԿՑՈՒՐԴ», 38-րդ դաշտում սոցիալական աշխատողի ստորագրությունը:

14. Օգնությունն ստանալուց հետո ցուցակում տարածքային մարմնի համապատասխան աշխատողի կողմից օգնություն ստացած քաղաքացու հերթական համարը վերցվում է շրջանակի մեջ: Քաղաքացին, նշելով իր անձնագրի համարը, ստորագրում է ցուցակի համապատասխան սյունակում (տողի շփոթման կամ ստորագրության ժամանակ վրիպման արդյունքում քաղաքացու կողմից սխալ սյունակում կատարված ստորագրությունը համապատասխան աշխատողի կողմից ջնջվում է կարմիր գրիչով մեկ գծով, որից հետո շահառուին առաջարկվում է ստորագրել ճիշտ սյունակում):

15. Օգնության բաշխման ժամկետը, բաշխման առաջին օրվանից հաշված, 10 աշխատանքային օր է:

16. Չբաշխված և ի պահ թողնված օգնության լրացուցիչ բաշխման համար տարածքային մարմնի պետը Հայաստանի Հանրապետության մարզպետարան է ներկայացնում գրավոր առաջարկություն մնացորդը բաշխելու վերաբերյալ:

17. Տարածքային մարմինները օգնության ստացման ժամանակ ճշտում են ստացված օգնության քանակի փաստացի համապատասխանությունը՝ բեռնագրում կատարելով համապատասխան նշումներ:

18. Փաստացի և բեռնագրով նախատեսված քանակությունների, ինչպես նաև փաթեթավորման անհամապատասխանության դեպքում, տարածքային մարմինն անմիջապես գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության մարզպետարան (Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարան), որի վերաբերյալ, մինչև բաշխման աշխատանքների սկիզբը, ընդունում է որոշում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 24-ի N 1532 - Ն որոշման

Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ DVB-T2 ՍՏԱՆԴԱՐՏԻ ԹՎԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԻՉ ՍԱՐՔԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ

NN ը/կ	Բնութագիրը	Նկարագրությունը
1.	Օգնության անվանումը	Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրում
2.	Իրականացնող կազմակերպությունները	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մարզպետներ (Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետերի (համաձայնությամբ), սոցիալական աջակցության տարածքային գործակալություններ (բաժիններ)
3.	Նվիրատու կազմակերպությունը	Հայաստանի Հանրապետության կառավարություն
4.	Օգնության բաշխման համար պատասխանատու կազմակերպությունը	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն
5.	Մեկ միավոր օգնության նկարագրությունը	DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարք (կցուրդ)
6.	Օգնության մեկ միավորի ծավալը ՝	1 հատ
7.	Օգնության ընդհանուր ծավալը	46494 հատ
8.	Օգնություն ստանալու հավակնություն ունեցող ընտանիքներ	2015 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և 34.6 և ավելի անապահովության միավոր ունեցող ընտանիքներ
9.	Օգնության տրամադրման պայմանը	անվճար
10.	Օգնության բաշխման սկիզբը	ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից
11.	Օգնության բաշխման տևողությունը	
	-հիմնական փուլ	10 աշխատանքային օր
	-հաշվետվությունների փուլ	5 աշխատանքային օր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ